

**ԵՌԱՆԿՅՈՒՆԱԶՓԱԿԱՆ
ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ**

**§ 2. ԱՆԿՅԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՅՈՒՄԸ:
ՊՏՏՄԱՆ ԱՆԿՅՈՒՆ**

Օրինակ 2: $19,2\pi$ ռադիան և 33 ռադիան անկյունները ներկայացնենք $\beta + 2\pi k$ տեսքով, որտեղ $0 \leq \beta < 2\pi$, իսկ k -ն ամբողջ թիվ է:

Տրված թվերը մնացորդով բաժանենք 2π -ի: Ունենք՝

$$19,2\pi = 2\pi \cdot 9 + 1,2\pi \quad (k = 9, \quad \beta = 1,2):$$

Այնուհետև, դժվար չէ ստուգել, որ $10\pi < 33 < 11\pi$, հետևաբար՝

$$33 = (33 - 10\pi) + 2\pi \cdot 5 \quad (k = 5, \quad \beta = 33 - 10\pi)$$

Օրինակ 3: Ժամացույցի թուղթալաքն ինչ անկյունով պետք է պտտել, որպեսզի ժամացույցի ցուցումը փոխվի. ա) 6 ր առաջ, բ) 6 ր հետ: (Սլաքները պտտել թույլատրվում է միայն ժամալաքի պտտման ուղղությամբ):

Լուծում: ա) Քանի որ թուղթալաքը 60 թուղթում կատարում է մեկ պտույտ, ուստի 6 ր-ում կկատարի $\frac{1}{10}$ պտույտ, այսինքն՝ $2\pi \cdot \frac{1}{10} = \frac{\pi}{5}$ ռադիան՝ ժամալաքի ուղղությամբ: Սակայն ժամալաքի շարժման ուղղությունը բացասական ուղղությունն է, նշանակում է՝ որոնելի անկյունը հավասար է $-\frac{\pi}{5}$ -ի:

բ) Ժամ ցույց տվող սլաքները 12 ժամ հետո նորից (առաջին անգամ) կգրավեն սկզբնական դիրքը: Հետևաբար, խնդրի պահանջը կարելի է իրագործել, եթե թուղթալաքը շարժենք (բացասական ուղղությամբ)

$$\left(12 - \frac{1}{10}\right) \text{ պտույտով, այսինքն՝ } -\left(24\pi - \frac{\pi}{5}\right) = -23\frac{4}{5}\pi \text{ ռադ անկյունով:}$$